Անսահմանության ու մեր մասին

Ցանկանո՞ւմ եք իմանալ, թե որքա՜ն մեծ է տիեզերքը, և որքա՜ն կարևոր է, որ այս պահին ունեք հնարավորություն՝ կարդալու այս տողերը:

Արեգակնային համակարգի մեծությունը պատկերացնելու համար հիշենք, որ Արևից Պլուտոն հեռավորությունը 5906380000 կմ է կամ 5906380000000 մ:

Որպես կանոն, մարդիկ մեկ միլիոնի ու մեկ միլիարդի միջև առանձնահատուկ մեծ տարբերություն չեն նկատում՝ պարզապես 3 զրո է, էլի: Իսկ ուզո՞ւմ եք իրականում գնահատել այդ երկու թվերի հսկայական տարբերությունը. եթե դուք չքնեք ու ոչինչ չանեք ու ամեն թիվը մեկ վայրկյանում ասեք, միլիոն հաշվելու համար կծախսեք 11,57 օր, իսկ միլիարդ հաշվելու համար՝ շուրջ 11,574 օր կամ 31,7 տարի:

Ահռելի տարբերությունը զգացվե՞ց:

Հիմա հաշվեք, թե որքան ժամանակ է պետք Արևից Պլուտոն հասնելու համար, եթե փորձեք քայլել: Լավ, շատ մի՛ չարչարվեք, կքայլե՞ք, կքայլե՞ք ու… ձեզ պետք կգա մոտավորապես 187290 տարի կամ եկող-գնացող 2300 սերունդ:

Իսկ կարծում եք՝ Արեգակնային համակարգը մե՞ծ է: Ամենևի՛ն. այն անգամ չի երևում մեր Ծիր Կաթին գալակտիկայում, քանի որ պարզապես մի կետ է:

Իսկ մեր գալակտիկա՞ն: Այն պարզապես գաճաճ է իր 400 մլրդ աստղերով ու անթիվ մոլորակներով: Համեմատենք այն մի քանի այլ գալակտիկաների հետ:

Այժմ մեր գալակտիկան և մեր ամենամոտ հարևան գալակտիկան՝ Անդրոմեդան, սլանում են 400.000 կմ/ժ արագությամբ և շուտով կբախվեն: Իսկ այդ «շուտովը» ավելի քան չորս միլիարդ տարի է:

Հիմա գնահատեցի՞ք, թե որքան հեռու են իրար «ամենամոտ» գտնվող գալակտիկաները: Իսկ որքա՜ն գալակտիկաներ կան մոտակայքում: Եվ դուք գոյություն ունեք այս անսահմանության մեջ, ավելին, գոյություն ունեք գիտակցական մակարդակում: Ամեն օր մեկ միջատ տրորելու կամ մեկ տերև ու մոլախոտ պոկելու ժամանակ պարզապես հիշեք՝ գուցե նրանք միա՞կն են ողջ տիեզերքում, այն տիեզերքում, որի սկիզբն ու վերջն անհաշվելի ու անընկալելի են...

Նորովի գնահատեք ձեր կյանքը այս անսահմանության, անվերջության մեջ:

Պահպանենք մեր Երկիրը, մեր տունը, մեր հարազատներին ողջ անսահմանության մեջ:

Երբ կվերջացնեք կարդալը, նայեք երկնքին ու գնահատեք ձեր բացառիկությունը ողջ տիեզերքում:

Պատրաստեց **Թաթուլ Շահնազարյանը**
«Մխիթար Սեբաստացի»
կրթահամալիրի ուսուցիչ